

— Նորին Վեհափառութեան կարգադրութեամբ Սինոդի անդամ Արժ. Եսայիկ վարդապետ Տէր Մովսիսեանցին իրաւունք տրուեցաւ բժշկուելու զնալ երկու ամիս ժամանակով:

Մայիս 21.—Սինոդը՝ Տփլիսի գաղափարական պալատի վճռի համաձայն հրամայեց Սեանց վանահայր Արժ. Սարգիս վարդապետ Փիլոյեանցին՝ կարգադրեմ անել Դավիթ զարգաշ զիւղի Դաղար քահանայ Տ. Սաշաարեանցին (Նոր Բայրազիզի դուռն) նորա ապօրինի գործերի համար:

— Վեհափառ Հայրապետի կարգադրութեամբ Մայր Աթոռի միարան Արժ. Սիւրբ վարդապետը թողնուածին ստացաւ չորս ամիս ժամանակով ամարանոցներ զնալ բժշկուելու:

Մայիս 31.—Բիւրդ Մահէ Դիւօօղլու ինդիրը Տ. Կառավարչապետի թ. 5285 գրութեան համաձայն ընդունուած լինելով՝ Ս. Սինոդը հրամայեց Սարգարապատի գործակալին միտել նրան Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ Տէսով ու շուտափոյտ անդեկու թիւն հարգել այդ մասին:

— Վեհափառ Հայրապետի թ. 529 որդեկան համաձայն Ս. Սինոդը շրջաբերական ուղարկեց Հայոց բոլոր կոնսիստորիաներին և առաջնորդներին՝ որպէս զի այսուհետեւ բոլոր ուխտատեղիներին և վանքերի արդիւնքները և ստացուած նուէրները ուղարկուին անմիջապէս Սինոդ:



ԿՐԹՆԱԿԱՆ—ԲԱԺԻՆ

ԲԱՑԱՏՐՈՒԹԵԱՆ ԿԱՐՈՑ ԿԵՏԵՐ

Ս. ԳՐԶԻ ՄԷՋ:

Արժ. Նիկիէ քահանայ Դափամաշեան միշտ ֆարցումներ ուղարկելով մեզ՝ խնդրում է նոցա բացատրութիւնը տալ Արարատի մի-

ջոցաւ: Մենք կաշխատենք որչափ կարող ենք գոհացում տալ հետզհետեւ Տէր Հօր հոգեւոր հետաքրքրութեան և յոյս ունենալ որ մեր առած բացատրութիւնները հետաքրքրական և օգտակար կլինին նաեւ ուրիշների համար: Պէտք է ենթադրել որ այդպիսի հարցեր շատերին զբաղեցնում են. հրաւիրում ենք ամէնքին Տ. Նիկիէի օրինակին հետեւելու, մենք ի սրտէ ուրախ կլինինք և յօժարութեամբ պատասխան կտանք ամէն մի շահեկան հարցման: Կարող անձանց օգնութեան ևս զիմեղով:

Ա) Մանուկ Յիսուսին հրեշտակի հրամանաւ Նզխատոս փախցրին ծնողքը (Մատթ. Բ. 13—14). ինչպէս ուրեմն կարելի էր ութերորդ օրը թլփառել նորան Երուսաղէմում և քառասներորդ օրը տաճար ընծայել (Լուկ. Բ. 21—28). միթէ՞ յընթաց քառասուն օրուայ մեռաւ Հերովդէս:

— Աւետարանական պատմութիւնը իրատեւք չի տալիս ամենին ընդունելու թէ փախուստն Նզխատոս ընծայումից կամ թլփառութիւնից առաջ է եղել: Եթէ Հերովդէս «աստղի երեւալու ժամանակը ստուգելով՝ մոզերից՝ երկու տարեկանից ցած երեխաներին կոտորել տուաւ՝ կնշանակէ՝ արդէն մօտ երկու տարի կար, ինչ նոքա հրաշալի ստղղտեսել էին և կղրակացրել, որ միաժամանակ ծնուել է նաեւ «չրէից թաղաւոր»: Ուրեմն Փրկչին Նզխատոս փախչելիս թլփառութիւն և ընծայում փաղուց տեղի ունեցած պէտք է լինէին և նա կարող էր արդէն մօտ երկու տարեկան մանուկ լինել: Եկեղեցական աւանդութիւն է դարձել հարկաւ և ծննդեան տօնին կարգացում աւետարանների: Բրիտանացի ծնունդը պատկերացնող նկարների միջոցաւ ամբողջ է մեր մէջ այն կարծիքը, թէ մոզերը նոյն իսկ ծննդեան երեկոյեան են երկրպագութեան եկել, ինչպէս հովիւները բայց այդ յառաջացել է միայն երկու դէպքերի մէջ եղած խորհրդաւոր կապից: Կրօնական խորհրդածութիւնը, ինչպէս առհասարակ ամէն մի հոգեւոր թաղիք՝ չի կարող մանրակրկիտ պատմական հետախուզութեանց ետեւից ընկնել և նոցա ցոյց տուած սահմաններում փակուած մնալ. նորան ներքին խորհուրդն է զբաղեցնում և ոչ արտաքին երեւոյթը—

Աւետարանի մէջ պարզ ասած է նաեւ որ մոգերը Յիսուս մանկան տան մէջ են գտնուում և ոչ մսուրի մէջ, ուր նա ծնունդ աւելւում է կատարուել: աւետարանը ինչն է ասում այդ մասին: Ընդհակառակն երբ անմիջապէս յետոյ աւելացնում է. «Եւ իբրեւ լցան աւուրք սրբութեան նոցա ըստ օրինացն Մովսիսի ածին զնա յԵրուսաղէմ» և կարիք ու զիւրութիւն էլ չկար ամենեւին որ լինէր—Հերովդէս և թէ մեր այժմեան տարեհաշիւը ուղիղ լինէր՝ Բրիստոսի ծնունդից 4 տարի առաջ էր մեռել: բայց այս հաշիւը ուղիղ չէ ի հարկ է. Բրիստոս պէտք է ծնած լինի առ սակաւն 4 տարի աւելի առաջ քան մենք հաշուում ենք: իսկ թէ Հերովդէս որչափ է ապրել Նորա ծնունդից յետոյ որոշ չէ. վերելի հաշուից երեւում է որ նա կարող է երկու տարի և աւելի ապրած լինել: խնայեալ այս դժուար կհամաձայնէր ուրիշ հաշիւների հետ:

Բ. Փրկիչը բորոտների սրբելուց յետոյ պատուիրում է նոցա. «Զգո՛յշ լինի մի ումեք ասիցես» (Մատթ. Ը. 2—4. ԺԲ. 16. ԺԵ. 9. Մարկ. Ը. 40—44. Գ. 12. Դուք. Ե. 12—14). մինչդեռ ուրիշ տեղ պատուիրում է աշակերտներին. «Զոր ասեմ՝ ձեզ ի խաւարի ասիցէք ի լոյս և զոր լսէք յունկանէ՝ քարոզեցէք ի վերայ ասնեաց» (Մատթ. Ժ. 27.):

— Ղեւո. ԺԴ. 2—32 պատուիրած է, որ բորոտութիւնից բժշկուածը քահանայի մօտ պէտք է գնայ և այդտեղ երկարաձիգ արարողութիւնների պէտք է կատարուին: մինչև որ նա սրբուած հրատարակուի: Այն բորոտները, որոնց Բրիստոս բժշկում էր, կարող էին մտածել, թէ հարկ չկայ այլ ևս իրենց համար Երուսաղէմ գնալ և դորա հետ կապուած ծանրութիւնները յանձն առնել: Մարկոս Բ. 40—44, ուր ամէնից աւելի պարզ կերպով նկարագրած է առաջին բորոտի բժշկութիւնը՝ երեւում է, որ բժշկուածը յիւրաքանչիւր տրամադրութիւն ունէր. մինչև իսկ Փրկիչը զայրանում աստուծո՞ւ է նորան, որ գնայ օրէնքի ասածը ճշդիւ կատարէ: Մարդոյ Որդին ինչպէս ինքն ասում է, չէր եկել օրէնքը լուծելու. Նա մանկութիւնից ի վեր սովոր էր ճշդութեամբ կատարել բոլոր օրէնքները, եւ ի վերջոյ չէր յառաջ գալիս մի որ և է օրէնքը ինչպէս օր. շարաթի պատուիրանը: աւետարանական սկզբունքով լրացնելու: Ներկայ դէպքում մանուսանդոյ երբ օրէնքը խախտելու ամենեւին կարիք չկար: Նա չէր կարող լինել տալ, որ բորոտը իւր ծուրութեամբ ու անտարբերութեամբ պահանջուած յարգանքով չվերաբերուի դէպքի հայրենի սրբութիւնը: Այլ և Փրկիչին հաճելի չէ եղել երբեք անուցանել հրեայ ժողովրդի հրաշքներ տեսնելու առանց էլ չափազանց մեծ ձգտումը: Նա հրաշքներ չէր գործում մարդոց զարմացնելու կամ անբովանդակ աչքի զարկող նշաններով իւր գերբնական զօրութիւնը ապացուցանելու՝ այլ տառապեալներին օգնելու և կոշտացած սրտերում հաւատ զարթեցնելու համար: Այն անձը, որ երթարկուել էր կամ անմիջապէս ականատես էր եղել Նորա բուժիչ զօրութեան՝ կամայ ակամայ պէտք է զգար Նորա գերագոյն անձի հրապարակ և պատրաստուէր հաւատալու, թէ այստեղ մի վսեմ վերին տնօրէնութիւն է կատարուում, մինչդեռ հեռուից որ և է հրաշքի պատմութիւն լսողն իբրեւ մի կախարդական անիմաստ ինչ պէտք է ընդունէր այն և բոլորովին սխալ գաղափար կազմէր հրաշագործի մասին՝ աւելի ու աւելի անընդունակ դառնալով իսկական հրաշալին Նորա անձնաւորութեան մէջ ըմբռնելու: Ուստի Բրիստոս չէր կամենում, որ շատ խօսուի իւր հրաշքների վերայ, և ոչ մի անգամ բաւականութիւն չի տուել հրաշք խնդրողների դատարկ հետաքրքրութեանը: Բոլորովին տարբեր էր խնդիրը, երբ նորա վարդապետութեանն էր վերաբերում: Նա ինքը ճշմարտութիւնը համարձակ ամէնքի առաջ ասել էր. նոյնը պէտք է անէին նաև իւր հետեւողները: Բայց այստեղ ևս հարկաւոր էր եղել շատ անգամ մարգարիտը խոգերի առաջ ձգելու ցղուշանալ: շատ բան կար, որ Նա իւր մտերիմների շրջանում միայն ասել կարող էր, աստիճան առ աստիճան պատրաստել նոցա հասկանալու այն, որ հարեանցի կերպով ասած, մեծ ամբոխի առաջ անհասկանալի պիտի մնար. Նա կոչուած էր

քը լուծելու. Նա մանկութիւնից ի վեր սովոր էր ճշդութեամբ կատարել բոլոր օրէնքները, եւ ի վերջոյ չէր յառաջ գալիս մի որ և է օրէնքը ինչպէս օր. շարաթի պատուիրանը: աւետարանական սկզբունքով լրացնելու: Ներկայ դէպքում մանուսանդոյ երբ օրէնքը խախտելու ամենեւին կարիք չկար: Նա չէր կարող լինել տալ, որ բորոտը իւր ծուրութեամբ ու անտարբերութեամբ պահանջուած յարգանքով չվերաբերուի դէպքի հայրենի սրբութիւնը: Այլ և Փրկիչին հաճելի չէ եղել երբեք անուցանել հրեայ ժողովրդի հրաշքներ տեսնելու առանց էլ չափազանց մեծ ձգտումը: Նա հրաշքներ չէր գործում մարդոց զարմացնելու կամ անբովանդակ աչքի զարկող նշաններով իւր գերբնական զօրութիւնը ապացուցանելու՝ այլ տառապեալներին օգնելու և կոշտացած սրտերում հաւատ զարթեցնելու համար: Այն անձը, որ երթարկուել էր կամ անմիջապէս ականատես էր եղել Նորա բուժիչ զօրութեան՝ կամայ ակամայ պէտք է զգար Նորա գերագոյն անձի հրապարակ և պատրաստուէր հաւատալու, թէ այստեղ մի վսեմ վերին տնօրէնութիւն է կատարուում, մինչդեռ հեռուից որ և է հրաշքի պատմութիւն լսողն իբրեւ մի կախարդական անիմաստ ինչ պէտք է ընդունէր այն և բոլորովին սխալ գաղափար կազմէր հրաշագործի մասին՝ աւելի ու աւելի անընդունակ դառնալով իսկական հրաշալին Նորա անձնաւորութեան մէջ ըմբռնելու: Ուստի Բրիստոս չէր կամենում, որ շատ խօսուի իւր հրաշքների վերայ, և ոչ մի անգամ բաւականութիւն չի տուել հրաշք խնդրողների դատարկ հետաքրքրութեանը: Բոլորովին տարբեր էր խնդիրը, երբ նորա վարդապետութեանն էր վերաբերում: Նա ինքը ճշմարտութիւնը համարձակ ամէնքի առաջ ասել էր. նոյնը պէտք է անէին նաև իւր հետեւողները: Բայց այստեղ ևս հարկաւոր էր եղել շատ անգամ մարգարիտը խոգերի առաջ ձգելու ցղուշանալ: շատ բան կար, որ Նա իւր մտերիմների շրջանում միայն ասել կարող էր, աստիճան առ աստիճան պատրաստել նոցա հասկանալու այն, որ հարեանցի կերպով ասած, մեծ ամբոխի առաջ անհասկանալի պիտի մնար. Նա կոչուած էր

զգում իրեն մի փոքրիկ շրջանում միայն քարոզելու: Հրէական սահմաններից դուրս չէլնելու: մինչև որ այստեղ անյայտութեան մէջ կպտարաստուէր այն խմորը, որ ամբողջ աշխարհը պէտք է խմորէր: Մատթ. Ժ. 26—33 հատուածն առհասարակ մի աղգու յորդոր է, որ իւր աշակերանները ոչնչից երկիր չկրնէն և ոչ մի արգելքի առաջ կանգ չառնեն: երբ իրենց առաքելական պարտքը կատարելու կամ աւետարանը քարոզելու մասին է խօսքը: Ժամանակ պէտք է կար, որ նոքա ի սփռուս աշխարհի քարոզելու պէտք է ելնէին և աշխարհի մեծամեծների առաջ տարուէին. այդտեղ ահա նոքա երբեք չպէտք է դանդաղէին ըստէին և շրջապատող պայմաններին յարմար խօսքը խօսելու: յիշելով մի առ մի այն ամէնը, ինչ որ Գալիլիայի խաղաղ ծովի ափերին կամ Կափառնաուսի տան մէջ և Երուսաղէմի վերնատան մի օր լսել էին, և վստահ լինելով, որ ոչ ոք որեւէ զրկանք նոցա հասցնել՝ մի մազ անգամ զլսից փրցնել չի կարող առանց Երկնաւոր Հօր կամքի:

Գ) «Մատուցեալ զպիր մի ասէ ցնա. Վարդապետ, եկից և ես զկնի Գո, յոր վայր և երթիցես, Եսէ ցնա Յիսուս. Աղուեսուց որք Գոն և թռչնոց երկնից բոյնք, այլ Որդոյ Մարգոյ ոչ գայ ուր զիցէ զգլուխ Իւրս. (Մատթ. Ը. 19—20. Դուկ. Թ. 58):—Ինչո՞ւ չընդունեց զպիրն. մինչդեռ ինքն էր խնդրում ձկնորսներին ու մաքսաւորներին հետեւելու Իրեն:

Փրկի խորագնին հայեացքը, որ մարդոց որտի ծածուկները տեսնում էր և նոցա ընդունակութիւնները ճշգիւ չափում անշուշտ այդ զպիր մէջ մի բան էր տեսել, որ չէր թոյլ տայ նորան իւր հեռեղբ լինելու: Առանց պատճառի չէր, որ նա հաղարաւոր ունկնդիրների մէջ միայն 12 առաքեալ ընտրեց. ամէնքը կարող էին աւետարանի աշակերտ լինել և մինչև իսկ իրենց զտած փրկութեան ճանապարհը ուրիշներից ցոյց տալ՝ որոշ շրջանում աւետարանի քարոզիչ հանդիսանալ. բայց հեռեղ լինել Բրիտանիոյ բաւի ընդարձակ մաքով, առնել անձնազոհութեան խաչը և Նորա առաքեալը հանդիսանալ՝ քչերին էր վիճակուած: Նորա տուած

պատասխանը զպիրն ցոյց է տալիս արդէն՝ որ վերջինս ցանկութիւն յայտնելով հեռեղ Նորան՝ իրօք իւր «զլուխը զնելու տեղ» էր որոնում, յոյս ունէր հանգստութիւն և փառք գանել Նորա իբրեւ Մեսիայի՝ թագաւորութեան մէջ, բայց իւր մտածած ճանապարհով գանել չէր կարող, և Նորա ցոյց տուած փռոտ ճանապարհը բռնելու անընդունակ էր: Այդպէս մերժում է Փրկիչը նաեւ Գերգեսացւոյ երկրում բժշկած զիւսհարի իրեն հեռեղութեւ խնդիրը, թէպէտ պատուիրում է, որ նա իւր մօտ եղողներին պատմէ իրեն եղած բարեւարութեան մասին: Հասկանալի չէ, թէ ինչո՞ւ մի նախկին զիւսհար Բրիտանիոյ առաքեալների շարքը չպէտք է մտնէր:



ՄԱՐԿԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԱՌԱՔԵԱԼ

ԹԷՂՊՈՐՈՍ ՊԵՐԿԵՐ.

(Շարունակութիւն) *

ՊԵՐԿԵՐ երկրորդ անգամ հրապարակ դուրս եկաւ մի այնպիսի ծանր ժամանակի երբ ամէն բան ձախող էր գնում Ամերիկայում. մանաւանդ վատ էր ազատութեան բարեկամների զործը: Ստրկատերերը ամէն անգ յաղթանակում էին. յաղթող էին ընտրութեանց մէջ, յաղթող՝ ձերակոյտում, յաղթող՝ նաեւ օրէնսդրական մասում: Նոցա թեկնածուներն էին բարձրանում նախագահական աթոռ, ձայնից ստուար բազմութիւն ունենում համաժողովում և գնում ու ջնջում էին իրենց ցանկութեան համեմատ օրէնք ու կանոն. իսկ իրենց փոքրածիւ հակառակորդներին ճնշում ու երկիր չէին աղղում անսակ տեսակ սպառնալիքներով կամ վարձում յաջող սոփեստներ, որոնք ամէն արարք օրինական փաստերով հաստատում ու զովաբանում էին: Հարբիսոն մազ մնաց որ սպանուէր, սենատոր Սոմնիս չարաչար ծեծ կերաւ երկու վարձկան